1915 թ. հայկական կոտորածների ժամանակ և հետագա տարիներին թուրքական լաթաղանի զոհը դարձան ավելի քան հազար արևմտահայ մտավորականներ՝ գրողներ, արվեստագետներ, բժիշկներ, հրապարակախոսներ, ուսուցիչներ։ Իր զեկուցման մեջ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Մկրյանը անդրադարձավ Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի, Ռուբեն Զարդարյանի, Թլկատինցու և եղեռնի զոհ արևմտահայ մյուս գրողների ստեղծագործություններին։ Թուրքիայի կառավարողները, նշեց նա, չխնայեցին նույնիսկ այն հայ մտավորականներին, որոնք հոկայական ծառայություն էին մատուցել թուրքական կուլտուրային։

Արևմտահայության ինքնապաշտպանական կռիվներին նվիրված իր զեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Մատևոսյանը կանգ առավ Շապին-Գարահիսարի, Ուրֆայի, Վանի, Մուսա լեռան հերոսամարտերի վրա, ցույց տվեց այն կարևոր նշանակությունը, որ ունեցան Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում հայերի կազմակերպած ինքնապաշտպանական մարտերը թուրքական չարգարարների դեմ՝ հանուն ազատության և պատվասիրության։

Թուրքական պատմագրության մեջ հայկական կոտորածների վերաբերյալ. Հշմարտություն կոծկելու, այդ արյունոտ իրադարձությունները կեղծ հայելու մեջ ներկայացնելու, իրականությունը ենթագիտելու փորձերի մերկացմանն էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Ե. Ղազարյանի և պատմական գիտությունների թեկնածու Ռ. Սահակյանի փաստալից զեկուցումը։

«Ժողովուրդների լենինյան բարեկամության անհաղթ ուժը» թեմայով սեսիայում զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Կ. Ուզումյանը։ Նա բեղգծեց, որ սովետական իշխանության հաստատումից հետո անցած տարիների ընթացքում հայ ժողովուրդը մեր մեծ Միության եղբայրական ժողովուրդների շնորհիվ ձեռք բերեց վիթխարի նվաճումներ տնտեսության և կուլտուրայի բոլոր բնագավառներում։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գալոյանը «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և հայ ժողովրդի վերածնունդը» թեմայով իր զեկուցման մեջ հանգամանորեն խոսեց այն պատմական դերի մասին, որ կատարեցին Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիան, սովետական իշխանությունը և կոմունիզմի գաղափարները հայ ժողովրդի հետագա ճակատագրի մեջ՝ նրա կյանքի ամենաբախտորոշ ժամանակաշրջանում։ Զեկուցողն բեղգծեց սոցիալիստական Թուրքիայի կողմից նորաստեղծ Սովետական Հայաստանին ցույց տրված անշահախնդիր եղբայրական օգնության նշանակությունը երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու, նոր կյանքի հիմքերը կառուցելու գործում։

Միացյալ գիտական սեսիան հակիրճ խոսքով փակեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հ. Բատիկյանը։

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Հայ ժողովուրդը սիրով ու երախտագիտությամբ նշեց իր արժանավոր զավակի՝ մեծանուն հայագետ-գիտնական, ակադեմիկոս Մանուկ Արեղյանի ծննդյան 100-ամյակը։

Մեծ գիտնականի ծննդյան 100-ամյակին նվիրված ռեսպուբլիկական հանդիսավոր նիստը տեղի ունեցավ մայիսի 25-ին՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում։

Հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, հոբելյանական հանձնաժողովի նախագահ Մկրտիչ Ներսիսյանը։ Իր ներածական խոսքում նա տվեց Արեղյանի ինչպես գիտական, այնպես էլ հասարակական-մանկավարժական բազմաբովանդակ գործունեության բնութագիրը, շեշտելով, որ Արեղյանը, իրրև հայ ժողովրդի մշակույթի ու գիտական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը, իր բազմակողմանի և արգասավոր գործունեությամբ մեծ ավանդ է ներդրել մեր կուլտուրայի վերելքի ու ծաղկման գործում։ Արեղյանը իր նշանավոր գրչակիցների հետ միասին նոր աստիճանի բարձրացրեց հայ ժողովրդի բանահյուսության, գրականության, լեզվի ուսումնասիրության գործը։ Իրրև գիտնական նա հետևողական պայքար է մղել հնի դեմ և միշտ փնտրել է նորը, առաջավորը, սերտորեն կապված լինելով իր ժողովրդի հետ և հարազատորեն արտահայտելով նրա իղձերն ու ցանկությունները։

Հանդիսավոր նիստի մասնակիցները լսեցին Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Արամ Ղանալանյանի բովանդակալից զեկուցումը՝ Մ. Արեղյանի կյանքի և գիտական գործունեության

մասին։ Կյանքի ինչ ճանապարհ է անցել, գիտական ինչպիսի գործունեություն է ծավալել շուրջ 60 տարիների ընթացքում, ինչպիսի բարդ ու կնճռոտ հարցեր է լուծել, ինչ սկզբունքներով ու համոզումներով է առաջնորդվել և վերջապես՝ իբրև գիտնական ու քաղաքացի ինչ հատկանիշներով է օժտված եղել Մ. Արեղյանը,— այս հարցերի մասին խոսեց Ա. Ղանալանյանը։ Նա ցույց տվեց այն մեծագույն աշխատանքները, որ կատարել է Մ. Արեղյանը հայ ժողովրդական բանահյուսության, հայոց հին գրականության պատմության, հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառներում, միաժամանակ գնահատելով ու արժեքավորելով նրա հասարակական-մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև նշելով այն հիմնական գծերն ու հատկությունները, որոնցով բնորոշվում է Արեղյան-գիտնականը։

Մանուկ Արեղյանի ծննդյան 100-ամյակին էր նվիրված Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցավ մայիսի 21-ին։ Ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը։ Տալով Մ. Արեղյանի կյանքի ու գիտական գործունեության սեղմ բնութագիրը, Վ. Համբարձումյանը նշեց, որ Մանուկ Արեղյանը գիտական ասպարեզ մտավ այն ժամանակ, երբ հայագիտական միտքը ազատագրվում էր միջնադարյան կաշկանդումներից և դուրս էր գալիս զարգացման նոր հեռաստաններ. նա եղավ այդ նոր առաջընթացի կարկառուն ռահվիրան, հայագիտության զարգացման նոր ժամանակաշրջանի ուղի համահարթողն ու առաջամարտիկը։

Ժողովում «Մ. Արեղյանը որպես բանագետ-գրականագետ», թեմայով ընդարձակ ու բովանդակալից զեկուցում կարդաց մեծ գիտնականի աշխատանքային ընկեր, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը։ Զեկուցման նյութ ընտրելով մեծանուն գիտնականի գիտական գործունեության թերևս ամենամեծ բաժինը՝ բանագիտությունն ու դրականագիտությունը, նա հանգամանորեն վերլուծեց այն բոլոր աշխատանքները, որ կատարել է Արեղյանը 1880 թ. մայիսի Նախո քեռուց «Սասունցի Դավթի» մի պատումը գրի առնելուց մինչև իր կյանքի վերջը։ Մ. Արեղյանի կատարած բանագիտական, գրականագիտական հսկայական աշխատանքների ցուցադրման հետ մեկտեղ զեկուցողը տալիս է Արեղյան-գիտնականի բնութագրերը, նշում նրա բնորոշ առանձնահատկությունները և այն նորությունները ու կուռ տեսությունները, որ բերել կամ մշակել է Արեղյանը թե՛ իբրև բանահավաք ու բանագետ և թե՛ իբրև գրականագետ ու գրականության պատմաբան։

Մ. Արեղյանի լեզվաբանական ժառանգության գնահատությանն էր նվիրված ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ է. Աղայանի զեկուցումը, որտեղ Մ. Արեղյանի թողած հայագիտական-լեզվաբանական հարուստ ժառանգությունը ներկայացվելուց բացի ցույց տրվեց, թե որոնք են այն ճյուղերը, որ ստեղծել կամ գիտական մշակման ենթարկելով մի նոր՝ բարձր պատվանդանի վրա է դրել Մ. Արեղյանը։

Խ. Աբովյանի անվան Երևանի պետական մանկավարժական ինստիտուտում «Մ. Արեղյանի կյանքը և գործը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ա. Աբրահամյանը։ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստում լսվեցին Մ. Արեղյանի գիտական գործունեության տարբեր բնագավառներին վերաբերող ուշագրավ զեկուցումներ. պատմական գիտությունների դոկտոր Ա. Մնացականյանը հանդես եկավ «Արեղյանը և դուսանա-ժողովրդական քնարերգության խնդիրները» զեկուցումով, բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Հարությունյանը՝ «Արեղյանի հայ վիպական բանահյուսության տեսությունը», իսկ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Մարտիրոսյանը՝ «Արեղյանը և հին գրականության պատմության պարբերացումը» զեկուցումներով։ Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը անցկացրեց հատուկ գիտական նստաշրջան։ Ինստիտուտի դիրեկտոր Ռ. Հովնանի բացման խոսքից հետո կարդացվեցին մի շարք հետաքրքրական զեկուցումներ՝ «Մ. Արեղյանի ժառանգության մի քանի հարցեր» (բանասիրական գիտությունների դոկտոր Խ. Սարգսյան), «Մ. Արեղյանը և հայ նոր գրականության պատմության պարբերացման հարցը» (բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Սարինյան), «Մ. Արեղյանը և հայ տաղաչափության ուսումնասիրության հարցերը» (բանասիրական գիտությունների թեկնածու Է. Ջրբաշյան), «Մ. Արեղյանը և բառարանագիտությունը» (բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Գասպարյան) և «Գեղարվեստականության հարցը Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմության» մեջ» (բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյան)։

Մանկավարժական ինստիտուտում և Մատենադարանում անցկացված նիստերում մեծ գիտնականի մասին իրենց հուշերը պատմեցին մի շարք անվանի գիտնականներ և Մ. Արեղյանի որդին՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Մհեր Արեղյանը։

Ա. Մ.